ԱՍԱՏՈՒՐ ԱՍՐԻՅԱՆ

Ծնվել է 1892թ., Թիֆլիսում:
1917թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը: Մենշևիկների կողմից ձերբակալվել է և երկու տարի անցկացրել բանտում: Ազատ արձակվելուց հետո շարունակել է հեղափոխական գործունեությունը: Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո մինչև 1922թ. աշխատել է Թիֆլիսի տրամվայի հավաքակայանի տնօրեն, այնուհետև աշխատանքի է անցել Թիֆլիսի գավգործկոմում, եղել է տնտեսական բաժնի վարիչը (1922-1929):
1929թ. տեղափոխվել է Երևան և աշխատել քաղխորհրդում: 1931թ. հունվարի 4-ին նշանակվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ:
Ծանր հիվանդությունից հետո մահացել է 1931թ. դեկտեմբերին: